

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԲԵՄԱԿԱՆ-Բ

Շր. 25 Մարտ.- Արքեպիսկոպոս Յովհաննու երուսաղիմայ Հայրապետին եւ Հայրապետին Մերոյ՝ Յովհաննու Օմնեցուն եւ Վարդապետացն մերոց՝ Յովհաննու Որոտնեցուն եւ Գրիգորի Տաթևացուն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան:

Կիր. 26 Մարտ.- Քառասներորդաց: Տնտեսքին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ժախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնայ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէթեան: «Հայր Մեր» էն առաջ փարոզեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Գշ. 28 Մարտ.- Իրիկուան հսկումին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետեց եւ փարոզեց Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Եշ. 30 Մարտ.- Իրիկուան հսկումին ի Ս. Յակոբ հանդիսապետեց եւ փարոզեց Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Ուր. 31 Մարտ.- Իրիկնաղէմին, յաջորդ օրուան Քառասուն Մանկանց տօնին առիթով Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ հսկման մասնաւոր արարողութիւն: Հանդիսապետեց Տ. Բարսեղ Վրդ. Գալէմտէրեան:

- Ապա Տ. Գուսան Վրդ. Ալեանեան մի ֆանի ժառանգաւորաց սաներով Քառասուն Մանկանց նկարին առջեւ կարգաւորուած սեղանին առջեւ ծուկի գալով երգեցին օրուան տօնին յատուկ շարականը:

Շր. 1 Ապրիլ.- Արքեպիսկոպոս Քառասնից Որբ ի Սեբաստիա կատարեցան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Վերաբերումը կատարուեցաւ Քառասուն Մանկանց նկարին առջեւ շտկուած Սեղանին վրայէն, որուն դիմացը կաթսայի մէջ կը պլպլային ֆառասուն գոյնգոյն կանթեղներ, աւանդական ստոցապատ լիւր խորհրդանշող:

- Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր Գերեզմանին եւ Գիւտ Խաչի ալիին ուխտերէն ետք, վերջնոյս կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Բագրատ Վրդ. Պուրնէֆեան:

Կիր. 2 Ապրիլ.- Քառասներորդաց: Դատարաց: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

- Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ երկրորդ մուտքէն ետք, ի Ս. Յարութիւն, Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ օրուան Ս. Պատարագը մատուցեց եւ փարոզեց Լուսարարապետ Սրբազանը, որ նաեւ նախագահեց Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատեղւոյն շուրջ կատարուած եռադարձ մեծահանդէս թափօրին, որ աւարտեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Եշ. 6 Ապրիլ.- Իրիկուան հսկումին ի Ս. Յակոբ հանդիսապետեց եւ փարոզեց Տ. Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեան:

Ուր. 7 Ապրիլ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Շր. 8 Ապրիլ.- Ս. Գրիգոր Լուսաւորչին (Մուտնի Վերապն): Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսաւորիչ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Արդ. Զաֆարեան:

Կիր. 9 Ապրիլ.- Քառասներորդաց: Դաւառեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Հրէական րաժնին մէջ գտնուող Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Աւետիս Վրդ. Իփրանեան:

Եշ. 13 Ապրիլ.- Իրիկուան հսկումին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազանը:

Շր. 15 Ապրիլ.- Յիշատակ Յարութեան Ղազարու: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Յովհաննէս Արդ. Մայլեան, Աթենէն:

- Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, մեր վերնամատրան մէջ պաշտուեցաւ ժամերգութիւն եւ նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր: Թափօրապետն էր Տ. Համարձում Վրդ. Քէշիշեան:

Կիր. 16 Ապրիլ.- Մաղկազարդ: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Լուսարարապետ Սրբազան հօր գլխաւորութեամբ

երկրորդ մուտքն ետք, մեր վերնամասերան մէջ Ս. Պատարագը մատուցեց Տ. Նորայր Արք. Գաղազեան: Ապա կատարուեցաւ եռադարձ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանաւորներուն շուրջ: Թափօրականի ի ձեռքին ունէին ձիթեղեղեղ եւ արմաւիճեղեղ ուտեր: Մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորոց թափօրները:

Կատարուեցաւ «Անդաստան» նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր: Վանք վերադարձին «Հայոց Թաղի» ոստիկանատան մուտքէն, Միաբանութիւնը եւ դպիրները «Որ գլորհուրդ» շարականը երգելով բարձրացան Պատրիարքարան:

- Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ «Դոնրացէ՛ք» ի արարողութեան նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը: Իսկ փակեալ խորանին առջեւ կը գտնուէր Լուսարարապետ Սրբազանը, աղոթքն ունենալով Տ. Բագրատ եւ Տ. Թէոդորոս վարդապետները:

18 Ապրիլ.- Աւագ Երեմիայի: Ըստ սովորութեան Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի գաւթի Ս. Յովհաննէս Աւետարանչի մատան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Ժամարարն էր Տ. Յովհաննէս Արք. Մայիլեան: Ս. Թարգմանչաց երկ. Վարժարանի աշակերտութիւնը ընդունեց Ս. Հաղորդութիւն: Ապա կատարուեցաւ «Ուխտաւորաց Թափօր» Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զաւարեան:

20 Ապրիլ.- Աւագ Հինգշաբթի (Յիշատակ Ընթերցեց): Առաւօտուն Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Կարգ Ապաշխարութեան»: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ մատուցեց Տ. Բագրատ Եպիսկոպոս Գալստեան, Առաջնորդ Գանատայի Հայց. Եկեղեցւոյ:

- Կէսօրէ ետք Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ «Ունկույթ» ի սրտագրաւ կարգը, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր: Ներկայ էին բարձրաստիճան հիւրեր: Անկլիքան Եպիսկոպոսը վերջաւորութեան շուրջառով եւ ջաթալթաթ ի գլուխ բարձրացաւ Աւագ Խորան եւ Աւետարանէն հատուած մը կարդաց Անգլիքներով:

- Ժամ մը ետք Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեանի գլխաւորութեամբ փոքր թափօր մը այցելեց Քրիստոսի գոյգ բանտերը: Ս. Հրեշտակապետաց Վանուց գաւթը, Ս. Զիթենի ծառը եւ Ս. Փրկչի կիսաւեր մատուղը եւ կատարուեցաւ Հոգեհանգստեան կարգ:

- Գիշերուան ժամը 7էն 11:30 Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «խաւարման կարգը»: «Փառք ի Բարձուն» էն ետք, Տաճարին խորհրդաւոր մթութեան մէջ «Յայսմաւորք» ի Ամպիոնէն

Բարոզեց Տ. Առաքել Եպս. Գարամբան, Կոտայքի Թեմի Առաջնորդ:

Ժամերգութեան աւարտին Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց եւ կատարեց «Խաչի Քո Քրիստոս» ի խնկարկութիւնը:

21 Ապրիլ.- Աւագ Ուրբաթ (Յիշատակ խաչելութեան): Կէսօրը ինչ անց, Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամասերան մէջ կատարուեցաւ «Կարգ Խաչելութեան»: Հանդիսապետն էր Տ. Առաքել Եպս. Գարամբան:

- Կէսօրէ ետք Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ հանդիսաւոր «Թաղման Կարգ»ը նախագահութեամբ Կոտանդնուպոլսոյ Մեսրոպ Մուրաֆեան Պատրիարք Սրբազան Հօր:

22 Ապրիլ.- Աւագ Շաբաթ Ծրագալոյց Ս. Զատիկ: Առաւօտուն, ժամը 9ին Ս. Յարութեան Տաճարի դուռը բացուեցաւ բանալին առնուելով Աւագ Թարգման Տ. Գուսան Վրդ. Այնանեանի ձեռքէն:

Ժամը 11ին Մեսրոպ Պատրիարք Մուրաֆեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը մեկնեցաւ Ս. Յարութիւն, ուր յաջորդաբար կատարուեցան Լուսաւորեայի յարակից հանդիսութիւնները սկսելով Ս. Գերեզմանի կնքումէն:

Յունաց թափօրի վերջաւորութեան, մեր լուսահանը Տ. Բագրատ Վրդ. Պուրնէֆեան Յոյն Պատրիարքին հետ մտաւ Ս. Գերեզման, հինգ վայրկեան ետք, ակնթարթի մը մէջ մեր լուսակիրներու կողմէ փոխանցուեցաւ մեր վերնամասերան պատշգամին մէջ իր տեղը գրաւող Մեսրոպ Պատրիարքին, որ լուցեալ մոմերու փունջով օրհնեց խուռներամ բազմութիւնը:

Ապա կատարուեցաւ եռադարձ թափօր: Թափօրապետն էր Լուսահան Տ. Բագրատ Վրդ. Պուրնէֆեան: Մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորոց թափօրները:

- Վանք դարձին, Դաւթի բերդին առջեւ թափօր կազմած, մեր լուսահանը Տ. Բագրատ Վրդ. Պուրնէֆեան շուրջառագցեստ եւ ապակէ պահպանակի մէջ Ս. Լոյսը ի ձեռքին, Մեսրոպ Պատրիարք Հայրը շուրջառով խաչ եւ գաւազանով, շարականներու երգեցողութեամբ եւ զանգակահարութեամբ մտանք Մայր Տաճար:

Պատրիարք Հայրը Մայր Տաճարին մէջ կարդաց Ս. Զատկույթ Աւետարանը եւ Պահպանիչով արձակեց ժողովուրդը, աւետելով «Քրիստոս յարեալ ի Մեռելոց»: Ժամ մը ետք, կատարուեցաւ Ծրագալոյցի Ս. Պատարագը: Ժամարարն էր Տ. Խորէն Արք. Զաւարեան: Ս. Պատարագի աւարտին կատարուեցաւ նախատոնակ, նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

23 Ապրիլ.- Զատիկ Յարութեան Տեառն:

Կէս գիշերը երկու ժամ անց Մայրավանքի մեծ զանգը ոտի հանց Մայրավանքի Միաբանութիւնը, որ Տ. Տարօն Եպս. Ճէրէնեանի (Նիսէն) գլխաւորութեամբ մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար:

Ս. Գողգոթայի ուխտէն ետք, մեր վերնամաստան մէջ պաշտուեցաւ ժամերգութեան մէկ մասը, մինչեւ «հարց»: Ապա Ս. Գերեզմանի շրջափակը իջնելով, պաշտամունքը շարունակուեցաւ թափօրական զննցով: Մեր թափօրին կը հետեւէին Դպտոց եւ Ասորւոց թափօրները: Կատարուեցաւ «Անդաստան» եւ «Խաչի Քո Քրիստոսի» խնկարկութիւնը:

- Առաւօտեան ժամը 7:30ին Մեսրոպ Պատրիարք Մուքաֆեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատոյց եւ քարոզեց Մեսրոպ Պատրիարք Մուքաֆեան: Օրուան սպասարկող վարդապետներն էին Տ. Թէոդորոս Վրդ. Զաֆարեան եւ Տ. Էմմանուէլ Վրդ. Աբաջանեան:

- Վանք դարձին Հայոց թաղի մուտքէն «Այսօր յարեաւ» շարականը երգելով Միաբանութիւնը եւ ժողովուրդը բարձրացան Պատրիարքարան:

- Կէսօրէ ետք Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայրավանքի մեծ բակին մէջ կատարուած Զատկական հանդիսաւոր «Անդաստան»ին:

24 Ապրիլ.- Բշ. Բ. օր Ս. Զատիկ: Ուխտաւորաց հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ քարոզեց Լուսարարապետ Սրբազանը: Օրուան սպասարկող վարդապետներն էին Տ. Բագրատ Վրդ. Պուրնէֆեան եւ Տ. Խորէն Արդ. Զաֆարեան: Բուրլառակիր վարդապետներն էին Տ. Էմմանուէլ եւ Տ. Թէոդորոս վարդապետները: Ապա Լուսարարապետ Սրբազան Հայրը ամպիոպանիին ներքեւ Ս. Խաչափայտի մասունքէն ի ձեռքին, Միաբան Հայրեր մասունքներով, դարձան եռադարձ թափօր, որմէ ետք, Միաբանութիւնը եւ ժողովուրդը «Այսօր յարեաւ» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան: Պատրիարք Սրբազան Հայրը բոլորին բաժնեց նշխար:

Դշ. 25 Ապրիլ.- ԶԼ Տաքեղարձ Ապրիլեան եղեռնի: Նահատակաց յիշատակին հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի, Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Յովհաննէս Արդ. Մայիլեան: «Հայր Մեր»էն առաջ քարոզեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Մեր բիրաւոր նահատակներուն համար կատարուեցաւ

հոգեհանգստեան պաշտօն, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր: Ապա կազմուեցաւ երկարածիգ թափօր Հ. Ե. Միութեան, սկաւտ-արեւոյշներէ եւ Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամներէ եւ հայ հասարակութենէն: Բազմաթիւ պատատներու եւ ծաղկեպսակներու շարանով, թափօրը յառաջացաւ դէպի Ս. Փրկչի ազգային գերեզմանատունը, հանգստեան շարականներու երգեցողութեամբ: Արարայի նահատակաց Յուշարձանին ոտին գետեղուած էին ազգային զանազան կազմակերպութիւններէ եկած ծաղկեպսակներ: Հ. Բարեպարաց Միութեան անունով խօսք առաւ Փոլին Ալէմեան:

Դշ. 26 Ապրիլ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Տարօն Եպս. Ճէրէնեան:

Եշ. 27 Ապրիլ.- Աւետումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն Տ. Տարօն Եպս. Ճէրէնեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը ինքնաշարժերով իջաւ դէպի Գեթսեմանիի ձորը եւ «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատոյց Տ. Տարօն Եպս. Ճէրէնեան:

Շր. 29 Ապրիլ.- Յիշատակ գլխատման Արքայն Յովհաննէս Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Հայկազուն Արդ. Եղիայեան:

Կիր. 30 Ապրիլ.- Նոր Կիւրակէ (Կրկնագատիկ) Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց Լուսահան Տ. Բագրատ Վրդ. Պուրնէֆեան:

- Կէսօրէ ետք, տեղի ունեցաւ «Անդաստան»: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Դարիպեան:

Շր. 6 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիլիպի: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

- Կէսօրէ ետք, Տ. Արիս Եպս. Շիրվանեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Մեր վերնամաստան մէջ պաշտուեցաւ ժամերգութիւն եւ նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր: Թափօրապետն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Աբաջանեան:

Կիր. 7 Մայիս.- Աշխարհամատարան (Կանաչ Կիւրակէ): Դիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամաստան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Տ. Սեւան Եպս. Դարիպեանի գլխաւորութեամբ երկրորդ մուտքէն

ետ, օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցելու փարոզեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

«Հայր Մեր»էն առաջ կատարուեցաւ Հոգեհանգիստ 3 Մայիս 2006ին երեւան-Սոչի Արմավիր օդանւային Թռիչքի դժբախտ աղէտին զոհ զացած օդանւաւի անձնակազմին եւ ուղեւորներուն, թիւով 113 հոգիին ի հանգիստ: Ս. Պատարագի վերջաւորութեան Պատարագիչ Սրբազանը հանդիսապետեց «Անդաստան»ի արարողութեան:

Շր. 13 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիր. 14 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութին, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը: Ժամարարը եւ փարոզիչն էր Տ. Բագրատ Վրդ. Պուրնէֆեան:

Շր. 20 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Աբաջանեան:

Կիր. 21 Մայիս.- Տօն երբեման Ս. Խաչին. (351): Առաւօտեան ժամերգութեան աւարտին Տ. Սեւան Եպս. ընթերցաւ Տ. Կիրեղ Հայրապետի բուղբը յղուած Կոստանդ կայսեր եւ հանդիսապետեց «Անդաստան»ի արարողութեան:

Աւագ Սեղանին վերելք զետեղուած էր վառ կանթեղներով Ս. Խաչին նշանը: Ժամարարն էր Տ. Կորիւն Արդ. Բաղդասարեան:

Շր. 27 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Սեբէոս Բախանայ Ղալանեան:

Կիր. 27 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութին, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Դշ. 31 Մայիս.- Կէսօրէ ետք Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը ինքնաշարժերով բարձրացան Զիթենեաց լեռ, ուր Համբարձումն սրբավայրին մօտ կառուցուած վրանամատրան մէջ պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ:

- Երեկոյեան, նոյն վայրին մէջ պաշտուեցան «Հսկման» կարգը, ապա գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Յշ. 1 Յունիս.- Համբարձումն Տեառն: Առաւօտուն, Տ. Սեւան Եպս. Ղարիպեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը, ինքնաշարժերով բարձրացաւ Զիթենեաց լեռ ուր

«Հրաշափառ»ով կատարուեցաւ պաշտօնական մուտք Սրբավայրէն ներս: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցաւ Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Պատրիարք Սրբազան Հայրը, Ս. Պատարագին սկիզբը ժամանելով, այցելեց Մզկիթի պահապաններ կայացուցիչներուն, ապա նախագահեց Մայր Աթոռոյ Սիսէն Ս. Էջմիածին փոխադրութեան տարեդարձին (1441) առթիւ կատարուած «Հայրապետական Մաղթանքին»: Պատարագի վերջաւորութեան Սրբատեղւոյն առջեւ կատարուած «Անդաստան»ին հանդիսաւետեց Պատարագիչ Սրբազանը:

Շր. 3 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Համբարձման մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Սեբէոս Քինյ. Ղալանեան:

- Երեկոյեան ժամերգութիւնը եւ նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Կիր. 4 Յունիս.- Երկրորդ Մաղկազարդ: Առաւօտեան ժամերգութիւնը կատարուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամերգութեան աւարտին տեղի ունեցաւ «Անդաստան»: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զաւարեան:

Շր. 10 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Առաքելոց վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Նորայր Արդ. Գազազեան:

- Հոգեգալստեան նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

- Դիշերասկիզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեղեցի»ի եւ «Հսկման» հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազանը:

Կիր. 11 Յունիս.- Հոգեգալուստ: Առաւօտեան ժամերգութեան աւարտին կատարուեցաւ «Անդաստան» հանդիսապետութեամբ Տ. Արիս Եպս. Շիրվանեանի:

- Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցաւ Լուսարարապետ Սրբազանը: «Հոգի Աստուծոյ» երգէն առաջ, կարդաց Սրբոյն Յովհաննու Ոսկերեանի աղօթքը ուղղուած Ս. Երրորդութեան երեք անձերուն:

- Կէսօրէ ետք, Տ. Արիս Եպս. Շիրվանեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը այցելեց Վերջին Ընթրեաց Վերնատունը, ուր կատարուեցաւ ժամերգութիւն, ապա՝ Ս. Փրկիչ, ուր կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ, հանգուցաւ Պատրիարքաց, Լուսարարապետաց եւ միաբանից հոգիներուն ի հանգիստ:



ՊԱՏՐԻԱՐԺԱՐԷՆ ՆԱՅՈՑ

ARMENIAN PATRIARCHATE

№ _____

Թուական
Date _____

Հոգեհանգստեան Պաշտօն
Հայկական օդանաւին աղետին զոհերուն համար

Երուսաղէմի Հայ Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, հանդերձ Ս. Յակոբեանց Միաբանութեամբ, խոր կսկիծով իմացաւ Երեւան-Սոչի Արմավիա օդանաւային թռիչքի դժբախտ աղետի մասին, որուն զոհ գացած են օդանաւի անձնակազմը եւ ուղեւորները, թիւով 113 հոգի:

Հայ ժողովուրդի համար այս անակնկալ նկատառելի կորուստը տխրութեամբ եւ սուգով համակեց մեր սրտերը: Կը զգանք եւ կը բաժնենք հանգուցեալ զոհերուն բոլոր հարազատներուն վիշտը անոնց աղիտալի մահուան առթիւ:

Պատրիարքութեան եւ անոր կապուած համայններուն ցաւակցութիւնը կը յայտնենք անմիջապէս եւ սգաւոր բոլոր ընտանիքներուն, ինչպէս նաեւ ՀՀ Նախագահին եւ Կառավարութեան:

Այս առթիւ Հոգեհանգստեան Պաշտօն պիտի կատարենք այս Կիրակի առաւօտեան, 7 Մայիս 2006, Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցուելիք Սրբազան Պատարագի ընթացքին: Եւ պիտի աղօթենք ինքնաթիռի այս արկածին բոլոր զոհերուն հոգւոց խաղաղութեան եւ իրենց հարազատներու հոգեւոր միջոցառութեան եւ առողջութեան համար:

Թող Աստուած լուսաւորէ անդարձ մեկնածներուն հոգիները:

ԴԻԻԱՆ Ս. ԱԹՈՌՈՅ
3 Մայիս 2006



ՓՈՍՏԱՐԿՂ 14235 ՀԵՌԱՉԱՅՆ 6264853 ՖԱՔՍ 6264862 ԵՐՈՒՍԱԼԵՄ
P.O.BOX 14235 PHONE: 6264853 FAX: 6264862 JERUSALEM

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԵՂ. 23 Մարտ 2006.- Երուսաղեմի մէջ մտնող մեծ թիւով լեզուաբաններ, ինքնուրուշ Երուսաղեմի "Notre Dame" պանդոկին մէջ, Յունաստանի ազգային օրուան առիթով կազմակերպուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Սեւան Եպս. Լարիպեանի եւ Իսահակ Արք. Միմասեանի:

ԵՂ. 30 Մարտ.- Պատրիարք Սրբազան Հայրը ընդունեց Երուսաղեմի Երրայական Համալսարանի դասախօսներէն եւ առաջատար ուսանողներէն կազմուած խումբ մը, նախագահութեամբ Համալսարանի փոխ-Ռեկտոր Բրոֆ. Սարա Շթրուգ-մային: Ասիայի եւ Աֆիքիկէի Ուսմանց Ինստիտուտի Բաժանմունքէն ներս, Հայագիտական Ուսմանց դասախօսներէն Տէր. Սէրգիո Լա Բորդա առաջնորդեց խումբը մասնական վանքին տարբեր հաստատութիւններ:

ԴՂ. 18 Ապրիլ.- Լատինաց Ս. Զատկուան տօնին առիթով շնորհաւորանքի համար, Պատրիարք Սրբազան Հայրը ի գլուխ Միաբանութեան անդամներու, այցելեց Ֆրանչիսկեաններուն եւ ապա Լատինաց Պատրիարքարան, ուր ըստ նախապէս եղած համաձայնութեան ներկայ էին մնացեալ յարանուանութեան ներկայացուցիչներ:

Յաջորդ առաւօտուն, ժամը 11ին Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Արիս Եպս. Շիրվանեանի եւ Իսահակ Արք. Միմասեանի Զատկուայ շնորհաւորութեան համար այցելեց մտնող մեծ թիւով լեզուաբաններ, ինքնուրուշ Երուսաղեմի մէջ տեղի ունեցաւ Քաղաքացիներու 24րդ Միջազգային Գիտաժողովը, որուն կը մասնակցէին տարբեր երկիրներու քաղաքացիներ: Ընդառաջելով Երուսաղեմի քաղաքացիներ Ուրի Լուփոլիանսիի հրաւերին, Պատրիարք Սրբազան Հայրը ներկայ գտնուեցաւ Քաղաքացիներուն մէջ կազմակերպուած հիւրասիրութեան եւ քաջաման արարողութեան: Պատրիարք Սրբազան Հօրը կ'ընկերակցէին, Արիս Եպս. Շիրվանեան, Գոսան Վրդ. Ալեանեան եւ Իսահակ Արք. Միմասեան:

ԴՂ. 19 Ապրիլ.- Հռոմի Քահանայապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Պենեդիկթ ԺԵ.ի գահակալութեան տարեդարձին առիթով, Պապական Նուիրակ Ամտոնիո Արքեպիսկոպոս Ֆրանցիսկոս հրաւերին ընդառաջելով, Երուսաղեմի Նոթր Դամ Կեդրոնին մէջ կազմակերպուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Պատրիարք Սրբազան Հայրը, Արիս Եպս. Շիրվանեան, Գոսան Վրդ. Ալեանեան եւ Իսահակ Արք. Միմասեան:

ԵՂ. 25 Ապրիլ.- Յոյն նախկին Պատրիարք Իրինիոսի քաջասական նկարագրին եւ Լուսաւորեայի Արարողութեան Իրաւանց Հարցի Խնդրին պատճառաւ, 2002էն ի վեր դադարած էին Ս. Զատկական շնորհաւորանքներ Յոյն Օրթոտոքս

եւ Հայ Առաքելական Պատրիարքութիւններու միջեւ: Վերսկսուեցան զոյգ եկեղեցիներու աւանդական յարաբերութիւնները: Պատրիարք Սրբազան Հայրը ի գլուխ Միաբանութեան անդամներու, այցելեց Յունաց Պատրիարքարան, որտեղ ընդունուեցաւ Յոյն Պատրիարք Թեոփիլոսին եւ Միաբանութեան կողմէ:

ԴՂ. 26 Ապրիլ.- Հայոց Ս. Զատկական տօնակատարութեանց առթիւ, համաձայն նախապէս եղած կարգադրութեանց, Հայոց Պատրիարքարան շնորհաւորութեան եկան, Լատինաց Պատրիարքը եւ Քուստոսը իրենց Միաբանութեան անդամներով, եւ Կաթոլիկ եւ Բողոքական, Հայէշ, Ղպտի եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցիներու հոգեւոր պետեր եւ ներկայացուցիչներ:

Յոյն Պատրիարքը ընկերակցութեամբ իր Միաբանութեան անդամներու, այցելեց Հայոց Պատրիարքարան: Նոյնպէս, Պատրիարք Սրբազան Հօր այցի եկաւ Պապական նուիրակը:

ԴՂ. 3 Մայիս.- Իսրայէլի անկախութեան օրուան առիթով, նախագահ Մօշէ Քացաւի հրաւերով նախագահական ապարանքի շրջափակին մէջ, Իսրայէլին մէջ հաւատարմագրուած դիւանագիտական մարմիններուն ի պատիւ տրուած ընդունելութեան, ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Արիս Եպս. Շիրվանեանի, Գոսան Վրդ. Ալեանեանի եւ Իսահակ Արք. Միմասեանի:

Կիր. 7 Մայիս.- Երուսաղեմի մէջ տեղի ունեցաւ Քաղաքացիներու 24րդ Միջազգային Գիտաժողովը, որուն կը մասնակցէին տարբեր երկիրներու քաղաքացիներ: Ընդառաջելով Երուսաղեմի քաղաքացիներ Ուրի Լուփոլիանսիի հրաւերին, Պատրիարք Սրբազան Հայրը ներկայ գտնուեցաւ Քաղաքացիներուն մէջ կազմակերպուած հիւրասիրութեան եւ քաջաման արարողութեան: Պատրիարք Սրբազան Հօրը կ'ընկերակցէին, Արիս Եպս. Շիրվանեան, Գոսան Վրդ. Ալեանեան եւ Իսահակ Արք. Միմասեան:

ԵՂ. 25 Մայիս.- Ընդառաջելով Երուսաղեմի քաղաքացիներ Ուրի Լուփոլիանսիի հրաւերին, Երուսաղեմի Օրուան առթիւ Հին Քաղաքին Դաւթի Բերդին մէջ տեղի ունեցած հիւրասիրութեան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Արիս Եպս. Շիրվանեանի եւ Իսահակ Արք. Միմասեանի: